# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՓԱՄԲԱԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

«16» դեկտեմբեր 2015 թ.

No 99

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Փամբակ համայնք,
Հայգե՛ նփողոց 17

pambak.lori@mta.gov.am

098-86-93-03

Լոռու մարզի մարզպետ
Պարոն՝ Ա. Նալբանդյանին

Ձեզ եմ ներկայացնում Լ/Մ Փամբակ համայնքի ավագանու N22-Ն որոշումը:

Համայնքի ղեկավար՝ Ս. Լ. Ողիկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՓԱՄԲԱԿԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30 » Նոյեմբեր 2015 թ. N 22-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Գյուղական համայնքի ավագանին որոշում է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի գյուղական համայնքում 2016 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | ԿՈՂՄ(3) | ԴԵՄ(0) | ՁԵՌՆՊԱՀ(0) |
|---|---|---|---|
| Նարեկ Անտոնյան | | | |
| Անդրանիկ Հովսեփյան | | | |
| Գարեգին Սարոյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս. Ռիկխանյան